պուծոյ ստեղծուած է։ Իրեն պարտքն ու երջանկութիւնն է Աստուծոյ պատկերն ըլլալ, չուզել ուրիշ բան ըլլալ, և ուզել բարի ըլլալ՝ որովհետև Աստուած բարի է, և մարդուս վախճան որոշեր է՝ ամէն տեսակ առաքինութեան հասնիլ ու իրեն հետ միանալ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Լրգ մօր 'է դէնչ մանկան է-րոյ։

ԽԱՐԵԿԻՐԹ աղգաց մէջ մարք իրենց զաւկրները գրեթէ անոնց արևուն լոյսը տեսած օրէն կը սկսին կրթել, զանոնք որրանի մէջ շարժելու կամ գրկերնուն մէջ գգուելով քնացուցած ժամանակնին՝ իրենց մայրական զգայուն ու կիրթ սրտէն ինչ որ կը բղխէ անոնց ապագայ առաքինական և գովելի վիճակին համար՝ զայն անոնց անկրճին անուշ քնարի ձայնի մը պէս, երբեմն արցունքի կաթիլներով և երբեմն զուարթ ժպիտներով կ'երգեն, ինչուան որ այն պզտիկ անմեղութիւնները հրեշտակի պէս քնանան։ Այս մայրական գերագոյն սիրոյ և փափաքանաց զգայմունքը խիստ աղուոր բացատրուած տեսնելով գաղղիարէն երգի մը մէջ, հայերէն թարգմանեցինք, իբրև օրինակ մը մեր աղգին մարց ալ, իրենց մանկունքը այսպիսի երգերով քունի հրաւիրելու՝ ապրևելեան եղանակ մը յարմարցնելով։

Որպէս այր ձրկնորս՝ 'ի ծագել այգուն
Օթէս արշալուսոյ լըրտեսէ անքուն
Յերկինս դիտելով զյոյս աւուր պայծառ,
Մանկիկ, 'ի քո պերճ բաղդ խորհի քոյդ մայր։
Լրկնից դու հրեշտակ, զի՞նչ յերկրի լեցիս.
Այր խաղաղասէր, թէ այր 'ի կըռիւս,
Հահանայ բեմին, 'ի կաքաւս ասպետ,
Հերթող քաջանուն, հռետոր, զօրապետ։
Այլ 'ի գիրկս իմ ննջեա այժմիկ
Կապոյտ աչօք հրեշտակ գողտրիկ։

Սա ծընեալ 'ի մարտ, աչկունքն իսկ ասեն,
Արութիւնք սորին ինձ որ փառք վըսեմ.
Մարտիկ սոսկ՝ ընդ հուպ լեցի զօրապետ,
Դիմեալ ուրշաւէ դառնայ սպարապետ.
Տեսանէք ըզսա 'ի մէջ ճակատուց
Ներկիւղ վազեալ ընդ տեղ հրազինուց.
Խուսէ թըշնամին, դիմակալ սըմին
Ոչ ոք. փող հարէք, յաղթեաց որդեակն իմ։
Այլ զօրավարդ մանկիկ սիրուն
Արդ յիմ 'ի գիրկ լեր քաղցր 'ի քուն։

Բայց մի դու որդեակ, ինձ մօրս ահ է մեծ
Թէ 'ի գոռ զինուց մըտցես 'ի հանդէս.

Ի վայր սրբազան կեանք քո սահեսցին
Օ՜երծ 'ի վրտանգաց՝ 'ի յարկս անմահին.
Իբրև զայն լապտեր լուցեալ 'ի բեմի,
Կամ զանուշահոտ աղօթից ձօնի.
Կամ իբր ըզկնդրուկ զոր անդ Արարչելոյն
Ընծայէ Արովբէն երգովք եռանդուն։
Այլ դու այժմիկ 'ի գիրկս իմ օն
Պ՜եւտացիդ սուրբ, հանգիր 'ի քուն։

Ա՛խերեա ինձ Աստուած, թէ յանչափ գութս իմ
Յանցեայ իմաստուն օրինաց քոյին.
Այլ եթէ մեղայ՝ զիս լոկ պատժեսցես,
Օ՜ի թերեհաւատ միայն գրտայ քեզ.
Ինչ առ որբանաւ՝ մոր սրտի տենչանք
Հարկ է թէ իցեն օրհնութեան մաղթանք.
Ի քեզ Տէր որդւոյս հոգք են ապաստան,
Վասն ինձ՝ քեզ ծանօթ, նոյնչափ սիրական։
Այլ դու հրեշտակդ իմ յաչս աղու
Հանգիր 'ի գիրկս յայս յանդորրու։

Հ. Տ. Թ.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՏՈՒԱԾ ԻԳ

Փոխ [1]։

ՏԷՐՈՒԹԻՒՆՔ կամ իրենց տնտեսութեան թերութեանը պատճառաւ, և կամ կարգէ դուրս դիպուածի մը, ինչպէս են պատերազմ, հասարակաց վերաբերեալ հարկաւոր շինութիւն մը, և այլն, չեն կրնար իրենց տարեկան եկամուտը բաւեցընել, և հարկ կ'ըլլայ տերութեան սակը [2] աւելցընել, իրեք չորս հարիւր միլիոն մը վրան աւելցընելով։ Բայց որովհետև ժողովուրդը արդէն նեղեալ է տուրք տալէն, և շատ անգամ աղքատք գրեթէ իրենց կարողութենէն վեր տուրք կուտան, չկրնար տերութիւնը նորէն մեծ գումար մը տուրք ձգել ժողովրդեան վրայ. ուստի կը ստիպուի ուրիշ հնարքով մը աս ստակը ձեռք բերել. և ահա հարկ կ'ըլլայ փոխ ստակ առնել. հարիւրին 5, 4, 3 շահ տալով, անանկ որ տերութիւնը մէկ տարուան մէջ կրնայ 200 միլիոն փոխ ստակ առնել՝ տարեկան տուրքը 10 միլիոն միայն շատցընելով. որ երկրին ընդարձակութեան և բնակչաց շատութեանը նայելով քիչ բան մը կ'երևնայ. և այս 10 միլիոնը 200 միլիոնին շահը վճարելու համար է։ Տերութիւնը միլիոններու կարօտ եղած ժամանակը՝ որպէս զի կարենայ մէկէն պատրաստ ստակ գտնել, հասից թուղթեր [1] կը հանէ. որոնց վրայ նշանած է այսչափ դրամագլխոյ այսչափ եկամուտ. զոր օրինակ 100ին 5. այս թուղթերը որովհետև տերութիւնը երկայնմտութեամբ զատ զատ չկրնար ծախել, մեծամեծ լումայափոխներու կամ մասնա-

1 Emprunt. 2 Budget.

1 Titres ou rentes.